

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ
ՔԱՂԱՔԱԿԲՐՈՒԹՅԱՆ
ՕՐԲԱՆ

ՀՏԳ- 941 (479.25):325

ԳՄԳ- 63.3(2Հ)+66.3(2Հ)

Շ 973

Գիտաժողովը նվիրվում է

Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին

Տպագրվում է գիտաժողովի խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝

Արտակ Մադալյան

Գիտաժողովի ծրագրային կոմիտե՝

Արամ Սիմոնյան – ԵՊՀ ռեկտոր, Վլադիմիր Բարխուդարյան – ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, Բաբկեն Հարությունյան – ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար, Աշոտ Մելքոնյան – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, Ռուբեն Սաֆրաստյան – ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, Արարատ Աղասյան – ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, Պավել Ավետիսյան – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն

Շ 973 ՇՈՒՇԻՆ ՀԱՅՈՑ ԶԱՂԱԶԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆ: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր: – Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, – 370 էջ + 1 էջ ներդիր:

ԳՄԳ- 63.3(2Հ)+66.3(2Հ)

ISBN 978-5-8080-0715-4

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2007

ՀԵՆՐԻԿ ՍՎԱԶՅԱՆ
 ՀՀ ԳԱՄ պատմության ինստիտուտ

**ԽՈՐԵՆԱՅԻԱԿԱՆ ԱՎԱՆՂԱԶՐՈՒՅՑԻ
 ՄԻՍԱԿ-ԱՌԱՆՅԱՆ ՃՅՈՒՂԸ
 ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՏԱՂԶԸ**

Մեզ հետաքրքրող ավանդագրույցի համաձայն՝ Հայկի սերունդ Սիսակի ժառանգներից Առան անունով քաջ և անվանի մարդուն Վաղարշակ հայոց թագավորը¹ կողմնակալ է նշանակում Մեծ Հայքի հյուսիսարևելյան կողմերում, նրա համար Կուր գետի ընթացքով ժառանգություն հաստատելով «զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն, որ ասի Հնարակերտ»², տարածք, որի սահմանները, սույն հաղորդման համաձայն, կազմում էին հյուսիսում Կուր գետը, հյուսիս-արևմուտքում՝ Հնարակերտ ամրոցը, հարավ-արևելքում՝ Արաքս գետը, իսկ արևմուտքում՝ Սյունիքի հետ շփման գիծը՝ Արցախյան, Սևանի ու Միափորի լեռները: Այն իրենից ներկայացնում էր մի եռանկյունի, որն ընդգրկում էր Հայոց Ուտիք և Արցախ նահանգներն իրենց հայ բնակչությամբ:

Լինելով Սիսակի ժառանգներից, Առանին, տրամաբանական է կարծել, բաժին էր հանվելու իր նախնու տիրույթներից:

¹ Հայոց ավանդական թագավոր, հավաքական մի կերպար, որ, սակայն, իր մեջ խտացնում է հիմնականում Հայաստանում Արշակունյաց հարստության հիմնադիր Տրդատ Ա-ի (66–88 թթ.) գծերը: Հ. Մանանդյանը գտնում է, որ նա հայ Արշակունյաց ժառանգական հարստության հիմնադիր Վաղարշ Բ-ն է (186–198 թթ.), (տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հ. Բ, Ե., 1978, էջ 62), բայց որքան էլ հավանական լինի մեծ գիտնականի եզրակացությունը, այնուամենայնիվ Վաղարշակն իր գործունեությամբ ու ժամանակաշրջանով ավելի է հարմարվում Տրդատ Ա-ի կերպարին:

² *Մովսես Խորենացի*, Պատմութիւն Հայոց, Ե., 1991, էջ 113 (հետագայում՝ Խորենացի):

իսկ նա տիրում էր հորից՝ Գեղամից ստացած ընդարձակ կալվածքների, որոնք տարածվում էին «ի ծովէն (Գեղամայ – Զ. Ս.) ընդ արևելս մինչև ցղաշտ մի, ուր գետն Երասխ հատեալ զքարանձաւս լերանց՝ անցանէ ընդ խոխոմս ծիգս և նեղս ահագին ղնդչմամբ իջանէ ի դաշտն»³: Այստեղից պարզ երևում է, որ Սիսակի բնակության վայրը, որն իր անունով կոչվեց «Սիւնիք» կամ, որպես նրա «յըստակագոյնս» անվանում «Սիսական»՝ պարսկական ձևով⁴, սկսվում էր Գեղամա ծովից և ձգվելով դեպի արևելք, վերջանում ինչ-որ դաշտով, որով, ճեղքելով այն հատող սեպացած լեռները, հոսում էր Երասխը: Հետևաբար մատնանշված սահմաններում ամփոփված երկրամասից պետք է առանձնացվեր Առանի բաժնեկալվածքը ու տրվեր նրան ի ժառանգություն: Եվ, ինչպես ցույց են տալիս Սիսակի երկրի ու Առանի տիրույթի մակերևութների մի քանի ընդհանրություններ, այդպես էլ արվել է: Սիսակի երկրի մասին վերը բերված մեջբերումներից տեսանելի է, որ վերջինս իրենից ներկայացնում էր լեռնային ու դաշտային աշխարհագրական մի շրջան, որի արևելյան սահմանը ողջ տարածքով անցնող Երասխ գետն էր: Առանի տիրույթն էլ էր ծածկված դաշտերով («զդաշտն Աղուանից») ու լեռներով («զլեռնակողմն նորին դաշտի»), իսկ արևելյան կամ հարավարևելյան սահմանը Երասխ գետն էր («ի գետոյն Երասխայ»), որը կտրում-անցնում էր երկրի մակերևութը ծածկող դաշտերն ու լեռները և եթե մինչ այդ եղել էր Սիսակի, ապա այժմ դարձել էր Առանի արևելյան սահմանը: Ուստի, երկու երկրների բնաշխարհային նմանությունները և, մանավանդ, Երասխի վերածվելը Առանի բաժնեմասի արևելյան սահմանի, միանգամայն բավարար են կարծելու, որ Առանի տիրույթը մինչ ժառանգաբար իրեն հասնելը կազմում էր Սիսական աշխարհի արևելյան մի հատվածը և այն մասով, որն ընդգրկում էր Արցախը, հավում

³ Նույն տեղում, էջ 41:

⁴ Նույն տեղում:

էր նրան: Հայկական այս երկու աշխարհների դրկիցությունը մատնանշում են նաև սկզբնաղբյուրները, մասնավորապես «Աշխարհացոյցը» իր «Արցախ յերի կալով Սիւնեաց» տողերով⁵: Ուրեմն, Արցախը, լինելով Սյունիքի արևելյան, կից հարևանը, կազմել էր նրա տարածքի երբեմնի հատվածը: Այս վերջին պատմական իրողությունը վերապրուկային ձևով պահպանվել է նաև նրա ու նրա առանձին աշխարհագրական վայրերի անվանումներում: Այսպես, հայ մատենագրության մեջ Արցախը հանդես է եկել նմանապես «Փոքր Սիւնիք» անվամբ⁶, ինչը ինքնին ենթադրում է նույնանուն մեծ ամբողջից զատված տարածաշրջան, որը որպես այսպիսին ստանալու էր ամբողջի անվանումը «Փոքր» մակդիրով կամ, ինչպես Գահնամակում է հիշատակվում՝ «Սիւնեաց երկրորդն»⁷, իբրև Սյունիքի ժառանգական հաջորդ: Թե՛ Սյունիքում և թե՛ Արցախում գոյություն ունեին «Հաբանդ» անունով գավառներ, որոնցից Արցախի Հաբանդ գավառը կրում էր «Միւս» տարբերակիչը և հանդես էր գալիս «Միւս Հաբանդ» անունով և այլն: Վերջինս անվանվել է նաև «Սիսական ի Կոտակ», որը «Սիսական-Սյունիք» և «Կոտակ-Փոքր» բառերի կապակցությունն է և «Փոքր Սյունիք» տեղանվան պահլավերեն ձևը, որ կրկին վկայում է Սյունիքի ու Արցախի միևնույն տարածաշրջանի տարմասերը լինելու և հետագայում միմյանցից զատվելու ու նույն անվամբ առանձին-առանձին հանդես գալու մասին: Հետևությունը մեկն է. հեռավոր ժամանակներում Արցախը Սյունիքի հետ միասին կազմել է տարածաշրջանային մի ամբողջություն և միայն կուսակալություններ հիմնելու Վաղարշակ (Տրդատ Ա) թագավորի գործունեության հետևանքով անջատվել է նրանից և վերածվել վարչաքաղաքական ինքնուրույն միավորի:

⁵ Աշխարհացոյց Մովսիսի Խորենացոյ յառելւածովք նախնեաց, Վենետիկ, 1881, էջ 33 (հետագայում՝ «Աշխարհացոյց»):

⁶ Խորենացի, էջ 260:

⁷ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Е., 1971, с. 250.

Առանի տիրույթի մյուս՝ մինչև Կուր գետը հասնող և հայկական Ուտիք նահանգի տարածքը կազմող շրջանները ևս մինչև Առանին պատկանելը գտնվել են Սիսակյանների գերիշխանության տակ: Նույն հայոց թագավոր Վաղարշակը Մեծ Հայքի հյուսիսարևելյան կողմերում՝ ընդհուպ Կուր գետը՝ հայերեն խոսակցության վերջին սահմանները («գեգերք հայկական խոսիցս») ընկած տարածաշրջանի վրա երկու կողմնակալ է նշանակում՝ նրանց ընտրելով Սիսակյանների և Կադմոսյանների՝ Հայկի թոռ Կադմոսի նահապետական տներից⁸: Եվ եթե նրանցից, ըստ ուսումնասիրությունների, Կադմոսյաններին վստահված կողմնակալությունը համապատասխանում է «ծաղեացուց», իսկ վերջինս էլ՝ Արցախի իշխանությանը⁹, ապա դժվար չէ եզրակացնել, որ տարածաշրջանի մնացած մասը գտնվելու էր Սիսակյաններից ընտրված կուսակալի, ասել է թե Սիսակյանների գերիշխանության տակ, որն էլ ժառանգության մասհանման ժամանակ նույնպես տրվել է Առանին:

Այսպիսով, Առանի ժառանգությունը ստացած տիրույթը տարածքային առումով բաղկացած էր աշխարհագրական այն շրջաններից, որոնք վաղ ժամանակներում Սիսական աշխարհի մասերն էին և Վաղարշակ թագավորի գործունեության հետ կապված անջատվել էին և ձևավորել իր ուրույն սահմաններով մի նոր, ինքնուրույն վարչաքաղաքական միավոր:

Կազմավորվելով Արցախի և Ուտիքի տարածքների միասնությունից, Առանի տիրույթն իր վերոհիշյալ սահմաններով պատմական մի որոշակի ժամանակաշրջանում և քաղաքական հանգամանքներում ստանում է «Աղուանք» աշխարհագրական անվանումը և սկսում հանդես գալ նաև հիշյալ

⁸ *Խորենացի*, էջ 112-113:

⁹ *Ս. Երեմյան*, Ծաղեացուց իշխանութիւն, ՅՍՄՅ ԳԱ Տեղեկագիր (հաս. գիտ.), 1960, թիվ 7-8, էջ 40-52, *Н. Адони*, Армения в эпоху Юстиниана, с. 294.

անունով¹⁰: Եվ որովհետև «Աղվանք» տեղանունը պարսկերենում և ասորերենում հնչում էր «Առան» ձևով, ուստի տարածաշրջանը սկզբնաղբյուրներում հիշատակվում է նաև այդ անվամբ¹¹:

Ավանդության մեջ «Աղուանք-Առան» անվանաձևի առաջացումը Մովսես Խորենացին կապում է Սիսակի «աղու» (քաղցր, հաճելի, դուրեկան) բնավորության հետ¹², բայց երկրամասի առաջին փաստացի տիրակալ համարում նրա ժառանգ Առանին: Վերջինիս է հատկացվում նաև հիշյալ տիրույթում բնակվող չորս նախարարական տների նախահոր դերը: «Ի սորա (Առանայ – Հ. Ս.) զաւակաց ասեն, – գրում է Խորենացին, – սերեալ զազգն Ուտէացուց և Գարդմանացուց և Ծաղեացուց և Գարգարացուց¹³ իշխանութիւնսն»¹⁴: Նրան

¹⁰ Մանրամասնությունները տես *Հ. Մվազյան*, Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից VIII դարը ներառյալ), Ե., 2006, էջ 216-221:

¹¹ «Առան» տեղանունը գործածվում է նաև լայն առումով, որ նկատվում է հատկապես արաբ հեղինակների գործերում, արտահայտելով Կովկասյան լեռներից, ավելի ստույգ, Դերբենդից Արաքս գետն ընկած տարածքը, կամ, այլ խոսքով, Աղվանից մարզպանության ընդգրկումները:

¹² *Խորենացի*, էջ 113:

¹³ Գարգարացիների էթնիկական պատկանելության, նրանց իշխանության տեղի և սրանց հետ կապված «Գարգարացուց դաշտի» տեղադրության հարցերը աղվանագիտության մեջ մնում են վիճելի ու մինչև վերջ չլուծված: Աղբյուրների հակասական հաղորդումները ուսումնասիրողներին հնարավորություն չեն տալիս մի ընդհանուր հայտարարի գալու: Դատելով Խորենացու քննարկվող հաղորդումից, նրանք հայկական ցեղեր էին, որոնց բնակության վայրը տեղորոշվում է Միլի-Մուղանք դաշտում, իսկ ըստ նրանց մասին նույն Խորենացու մեկ այլ հաղորդման՝ աղվանական ցեղերից էին, որոնց լեզվի հիման վրա Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց աղվանական այբուբենը (*Խորենացի*, էջ 329), հետևաբար նրանք ապրելիս պիտի լինեին Կուրի ձախափնյակում: Չնայած վիճող կողմերը հոգուտ իրենց տեսակետի առաջ են քաշում հավանական դրույթներ, բայց դրանք բավարար չեն հարցի վերջնական լուծման համար: (Առավել մանրամասնությամբ տես *Ս. Պետրոսյան*, Գարգարացուց դաշտի տեղադրությունը, ԼՀԳ, Ե., 1976, թիվ 7, էջ 67-76: *А. Акopian*, Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках Е., 1987, с. 57-74): Մեր ենթադրությամբ նրանք նույն անունը կրող, բայց աշխարհագրորեն տարբեր վայրերում ապրող ցեղեր էին, այն-

կրկնում է 7-րդ դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացին, այն տարբերությամբ, սակայն, որ երկրամասի անունը բխեցնում է ուղղակի Առան նախնու բնավորության՝ Սիսակի համար մատնանշված դրական հատկանիշից¹⁵:

Առանին ներկայացնելով իբրև երկրամասի առաջին տիրակալ ու տեղի ժողովուրդների նախահայր, պատմահայրը նրան կապում է երկրի «Առան» անվան և սրան առնչվող խնդիրների հետ:

Այսպիսով, Սիսակ-Առանյան ավանդապատումը պատկերում է Հայոց Արևելից կողմերում բարձրացած վարչաքաղաքական միավորի նախնական պատմությունը՝ նրա ձևավորումը, այն բնակեցնող ժողովուրդներին, վերջիններիս ծագումն ու էթնիկ պատկանելությունը, տալիս երկրամասի անվան ստուգաբանությունը և այլն, որ լիովին համապատասխանում է բուն՝ մարաբասյան ավանդության ոգուն: Այստեղ էլ առասպելականի և իրականի միահյուսումով արտացոլված են հայ ժողովրդի առաջացման, հայոց պետականության կազմավորման, հայկական ավատատիրական-նախարարական համակարգի ձևավորման ընթացքն ու հարակից հարցեր: Սրանց կողքին, ի դեմս Հայկի սերունդների, իրենց մեկնաբանություններն են ստացել նաև Հայկական լեռնաշխարհի աշխարհա-

պես, ինչպես Կասպից ծովի արևմտյան ափի երկայնությամբ ձգված տարածքում առանձին բնակվող նույնանուն «կասպեր» ցեղերը (տես 7. *Սվազյան*, Կասպերի ցեղային միություններն Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ժամանակաշրջանում (մ.թ.ա. VI դ. – մ.թ.ա. IV դ.), ԼՂԳ, 1983, թիվ 6, էջ 81–89): Մեզ այդ մտքին է մղում նրանց հիշատակությունը ուտեացիների և մյուս ժողովուրդների հետ, որոնք հայտնի են թե՛ որպես հայկական ցեղեր և թե՛ Կուր և Արաքս գետերի միջև ընկած տարածքի բնակիչներ: Ուստի, կարծում ենք, նրանց կողքին ներկայացվող գարգարացիները ևս լինելու էին հայկական ցեղեր և բնակվելու էին այն նույն աշխարհագրական տարածքում, ինչ որ և մյուս ժողովուրդները:

¹⁴ *Խորենացի*, էջ 113:

¹⁵ *Մովսես Կաղանկատուացի*, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Ե., 1983, էջ 8 (հետագայում՝ Կաղանկատվացի):

գրական շատ վայրերի անվանումներ: Մասնավորապես, ավանդության համաձայն, Արագած լեռան ու Արագածոտն գավառի անվանադիրը եղել է Հայկի ավագ որդին՝ Արամանյակը, Մասիս սարին և Արմավիր քաղաքին իր անունն է տվել Հայկի կրտսեր որդին՝ Ամասիան, վերջինիս թոռ Երաստը Երասխի, իսկ Գեղամ նախնին Գեղամա լեռների, ծովի ու գավառի անվանադիրներն են և այսպես շարունակ¹⁶: Նման պարզաբանումները, որոնց թիվը բնավ էլ չի սահմանափակվում նշվածներով, ցույց են տալիս, որ պատմահայրը աշխարհագրական անունների ծագման բացատրության համար հիմք է ընդունել վերջիններիս անձնավորելու սկզբունքը և դրանց առաջացումը կապել այս կամ այն առասպելական անձի անվան հետ:

Բացառություն չէ նաև ավանդության մաս կազմող Սիսակ-Առանյան զրույցը: Այստեղ էլ Առանն է արտացոլում այն երկրամասը, որ տարածված էր Հայոց Արևելից կողմերում և հայտնի էր նմանապես «Առան» անվամբ: Եվ պատմահայրը, փորձելով բացատրել խնդրո առարկա անվան ծագումը, դիմում է ժողովրդական ստուգաբանության պարզ եղանակին և առաջ է քաշում Առան նախնու մասին ներկա զրույցը, որտեղ նրա անձի հետ է կապում նշված կողմերում վարչական նոր միավորի առաջացումն ու տեղի ժողովուրդների ծագումը: Նկատենք, որ Առանի մասին Խորենացու հաղորդումը հենց այդպես էլ ընդունել են ուսումնասիրողները և ասվածի ուղիղ իմաստով էլ օգտագործել իրենց հետազոտություններում, նրան հասցնելով մինչև հայոց թագավոր Վաղարշակի ժամանակները (մ.թ. I դար) և, նույնիսկ, մինչև մ.թ.ա. 2-րդ դարը¹⁷,

¹⁶ *Խորենացի*, էջ 37 և հտ.:

¹⁷ *Բ. Ուլուբաբյան*, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության (V–VII դդ.), Ե., 1981, էջ 132–136, 138, 143, 145, 146, Առանը դիտվել է նույնիսկ բուն Աղվանքի ցեղերի նախահայր (տես *Կ. Թրեբեր*, Очерки по истории и культуре Кавказской Албании, М–Л., 1959, с. 66). Փ. Մամեդով, Кавказская Албания и апбаны, Баку, 2005, с. 59, 140: Գրելով, թե Սիսակից սերված գունդը կուսակալություն է հաստատել բուն Աղվանքում, փաստո-

սրանից բխող բոլոր հետևություններով: Մինչդեռ, դատելով հատուկ անունների մեկնաբանման խորենացիական եղանակից, կարող ենք հաստատապես ասել, որ Առանը պատմական անձ չէ, այլ երկրամասին առնչվող որոշ խնդիրների լուսաբանման և անվան ստուգաբանության նպատակով հորինված անձ, անձնավորված կերպար: Պատահական չէ, որ Կաղանկատվացին, ցանկանալով իր աշխատության մեջ անվանապես նշել Առանի անմիջական հաջորդներին և նրանց մասին որոշ մանրամասնություններ տալ, չի կարողացել, որովհետև, ինչպես ինքն է ասում. «թիւ անուանցն յԱռանայ մինչև ցքաջն Վաչագամ... չէ յայտ», ուստի և ոչինչ չունի ասելու¹⁸: Այդպես էլ պետք է լիներ, որովհետև Առանը մտացածին անձ լինելով, չէր էլ կարող հաջորդներ ունենալ, այլև առհասարակ հիմք հանդիսանալ որոշակի պատմական իրադարձությունների շարունակականության վերհանման և լուսաբանման համար: Սակայն տեղին է այստեղ ասել և ընդգծել, որ ինչպես ամեն մի ավանդական կերպարի, այնպես էլ Առանի մարմնավորումը հնարավոր էր միայն ու միայն առարկայական հիմքի վրա: Մեր օրինակում այդպիսին է երկրամասի համար «Առան» տեղանվան իրական գործածությունը:

Խնդրո առարկա տեղանունը գրավոր աղբյուրներում հիշատակվում է՝ սկսած 6-րդ դարից: Այն առաջին անգամ որպես տեղանուն հանդես է գալիս «Հռետոր» մականունով ասորի հեղինակ Չաքարիա Միտիլենացու «Ժամանակագրություն» աշխատության մեջ: Նրանում հեղինակը Գուրգան (Վիրք), Սիսական (Սյունիք), Բազգուն և այլ երկրների ու ժողովուրդների մասին խոսելիս նշում է նաև «Առան» կոչվող մի երկիր, որը գտնվում էր Հայաստան աշխարհում, ուներ իր լեզուն, հավատացյալ ու մկրտված ժողովուրդ և Պարսկաստա-

րեն նրանց է հետևում և Է. Դանիելյանը (տե՛ս նրա Գանձասարի պատմություն, Ե., 2005, էջ 38):

¹⁸ Կաղանկատվացի, էջ 41:

մին հպատակ սեփական թագավոր¹⁹: Նման անվամբ երկրի հիշատակությունը վերոհիշյալ երկրների հետ կողք կողքի և նրա տեղադրումը Հայաստան աշխարհում թույլ է տալիս մեզ համոզմունք հայտնելու, որ ասորի պատմիչի խոսքը Հայոց Արևելից կողմերում ընկած այն երկրի մասին է, որ Խորենացու տեղեկությունների համաձայն, ընդգրկում էր Կուրի և Արաքսի գետամիջյան տարածքը, այսինքն՝ Ուտիք-Արցախյան աշխարհը և ավանդության մեջ արտահայտված էր Առան նախնու անձով: Ջգուշավորությամբ, բայց նույն կարծիքն է հայտնում նաև Ն. Պիգուլևսկայան: «Առան» երկրի տակ, – գրում է նա, – պետք է տեսնել արևելյան Հայաստանի կամ Աղվանքի մարզը²⁰:

6-րդ դարից «Առան» տեղանունը սկսում է ավելի հաճախ երևալ մատենագրության մեջ: Նույն ասորի պատմիչը, դարձյալ 6-րդ դարի դեպքերի կապակցությամբ, մեկ անգամ ևս հիշատակում է այս անվամբ երկիրը, պատմելով վերջինիս Կարդոստ անունով եպիսկոպոսի մասին²¹, ով մեկնել էր հո-

¹⁹ Չաքարիա Միտիլենացի (Հռետոր), Ժամանակագրություն (տե՛ս Ասորական աղբյուրներ, թարգմանությունը բնագրից և ծանոթ. Հ. Մելքոնյանի), Ե., 1976, էջ 313–314: Н. Пигулевская. Сирийские источники по истории народов, СССР, М.-Л., 1976, с. 81.

²⁰ Н. Пигулевская, նշվ. աշխ., էջ 8: Այս տեսակետից ճիշտ չէ Հ. Մելքոնյանը, կարծելով, թե ասորի հեղինակի «Առանը» բուն Աղվանքն է (տե՛ս Ասորական աղբյուրներ..., էջ 319, ծնթ. 134):

²¹ Հայոց հոգևոր հայրերի ցանկում չկա Կարդոստ անունով եպիսկոպոս և չէր էլ կարող լինել, որովհետև պատմիչը տալիս է ոչ թե նրա իսկական անունը, այլ հոնեինն առաստված կոչելու նրա քարոզչական գործունեությունից բխող մականունը՝ ինքն էլ մեկնաբանելով այն որպես «Թեոկլետոս» (հունարենով), կամ «Աստվածակոչ» (արամեերենով) իմաստով (տե՛ս Ասորական աղբյուրներ, էջ 315): Ենթադրվել է նաև, որ «Կարդոստ» անունը կազմված է հայերեն «կարդալ» և «Աստված» բառերից (նույն տեղում, էջ 315, ծնթ. 126), հավանական մի ենթադրություն, քանի որ հայերենում «կարդալ» նշանակում է նաև «ձեռնել», «կոչել» (տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Կ. Ա., 1979, էջ 1067) և մյուս՝ «Աստուած» բաղադրիչի հետ կառույն «Աստվածակոչ», ինչը համարժեք է նրա անվան արամեական տարբերակին:

նաց աշխարհի քրիստոնեություն տարածելու նպատակով²², իսկ վրաց պատմիչ Ջուանշիրը (7-րդ դար) իր երկրի պատմությունը շարադրելիս որոշակի պատմական իրադարձությունների հետ կապված նշում է «Ռանի» երկիրը, այն երբեմն անվանելով նաև «Առան»²³:

Այդ ժամանակաշրջանին է վերաբերվում նաև «Առան» տեղանվան գործածությունը «Ռանի» ձևով՝ Աղվանք անվանը զուգահեռ: Թվարկելով Արևելյան Անդրկովկասում 6-րդ դարում Պարսկաստանի ձևավորած Հյուսիսային քուստակի (Քուստ ի Կոպկոհ) կազմի մեջ մտնող երկրները, Անանիա Շիրակացին գրում է. «Ռան, որ է Աղունք»²⁴, և այդպիսով մատնացույց անում թե՛ հին երկրի նոր անվան գործածության ժամանակաշրջանը և թե՛ նրա կիրառումը որպես «Աղվանք» աշխարհագրական տեղանվանը համարժեք հասկացություն:

Երկրամասի «Առան» տեղանունը պայմանավորում է, որ նրա ժողովրդին, ըստ բնակության վայրի, տրվի «առանեանք» («առանցիներ») անվանումը, որոշիչ, որ հայ մատենագրության մեջ սկսում է երևալ «Առան» տեղանվան հիշատակումներից հետո՝ ուշ շրջանի աշխատություններում, մասնավորապես Սեբեոսի մոտ: 7-րդ դարի մեր պատմիչը, նշելով բյուզանդական կայսր Կոստանդինի՝ 653 թ.²⁵ Կարին գալու և այստեղ նրան հանդիպելու եկած հայ իշխաններին ու նրանց հետ եկածներին, հիշում է և «առանցիներին»: «Անդ (Կարինում - Հ. Ս.), - գրում է նա, - ընդ առաջ եղև նմա (Կոստանդինին - Հ. Ս.) Մուշեղ Մամիկոնեան համագգեալքն իւրովք հանդերձ և այլովք ոմամքք իշխանաւք և գաւր ընդ Այրարատեան կողմանէ, Առասւեղեանք և Առանեանք և Վարաժնունիքն և Քնթունիք

²² Ասորական աղբյուրներ, էջ 315-316:

²³ Համառոտ պատմություն վրաց, պատմեալ Ջուանշիրի պատմիչի, Վենետիկ, 1884, էջ 7, 14, 29:

²⁴ Աշխարհացոյց, էջ 10:

²⁵ *Ն. Աղունք*, Քննություն Մովսես Կաղանկատվացու, Էջմիածին, 2005, էջ 58:

և Սպանդունիք և այլք ընդ Մոսին»²⁶:

«Առանցիների» հիշատակությունը այստեղ ցույց է տալիս, որ ի դեմս նրանց, պատմիչը նկատի ունի «Առան» անունով երկրից ժամանածներին, իսկ տերմինի հանդես գալը 7-րդ դարում ևս մի վկայություն է երկրանվան՝ ուշ ժամանակներում կիրառություն ունենալու մասին:

Այսպիսով, բերված օրինակները վկայում են, որ «Առան» տեղանունը գրավոր աղբյուրներում երևում է 6-րդ դարից սկսած և, ուրեմն, իրական գործածության մեջ պետք է մտած լիներ դրանից քիչ առաջ՝ նույն դարի սկզբներին կամ համենայն դեպս ոչ շուտ, քան 5-րդ դարի վերջերին:

«Առան» անվան ծագման ժամանակաշրջանը որոշելով 5-6-րդ դարերով, գալիս ենք այն հետևության, որ նրա հիմքի վրա հյուսված ավանդագրայիցը նույնպես ուշ ժամանակների գրական նմուշ է, ուստի և չէր կարող ստեղծված լինել մ.թ.ա. 2-րդ դ. (թեկուզ և 3-4-րդ դարերի, ինչպես ենթադրվում է²⁷) ստեղծագործություն համարվող ասորի հեղինակ Մար Աբաս Կատինայի՝ հայոց մեծերի ծննդաբանությունը ցուցող մատյանի գրության ժամանակ և նրա հետ միասին:

Լինելով հետագայի ստեղծագործություն, այն, ուրեմն, ետնամույժ է և մատյան է մտել վերջինիս կազմվելուց հետո, ամենայն հավանականությամբ, նշված ժամանակներում: Դա է ապացուցում նաև բուն ավանդության մեզ հասած տարբերակների համեմատական վերլուծությունը: «Ուշիմ ասորու» մատյանը, որը Մովսես Խորենացու համար ընդհանրապես

²⁶ Պատմություն Սեբեոսի, Ե., 1979, էջ 165 (հետագայում՝ Սեբեոս), (ընդգծ. - Հ. Ս.): Մովսես Կաղանկատվացին պատմում է, որ Կոստանդին կայսրը, գալով Կարին, իր մոտ է հրավիրում Աղվանից (իմա՝ Հայոց Արևելից կողմանց - Հ. Ս.) իշխան Ջուանշիրին, որտեղ մեծ պատիվների է արժանացնում նրան (տես *Կաղանկատվացի*, էջ 184-185): Համադրելով երկու պատմիչների հաղորդումները միմյանց հետ, գտնում ենք, որ «առանցիները» Կարին էին եկել այս իշխանի գլխավորությամբ:

²⁷ *Գ. Սարգսյան*, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», Ե., 1991, էջ 12:

աղբյուր է ծառայել իր «Չայոց պատմության» Ա գրքի 8-րդ գլխից մինչև Բ գրքի 9-րդ գլուխը ներառյալ գրելիս²⁸, նմանապես զետեղված է Սեբեոսի «Պատմության» սկզբում, Անանուն հեղինակի կողմից²⁹ որպես նույն Մար Աբաս Կատինայի (Սեբեոսի մոտ՝ Մարաբա Մծուրանցի՝ փիլիսոփա³⁰) հեղինակած գործ: Եվ դրանց համադրումը միմյանց հետ վեր է հանում այնպիսի տարբերություններ, որոնք մեր խնդրի համար ունեն էական նշանակություն: Մասնավորապես, Անանունի մոտ հիշյալ ավանդագրույցը ներկայացված է առանց խորենացիական տարբերակում առկա Սիսակ-Առանյան հատվածների: Այստեղ ուղղակիորեն ասվում է, որ Չայկի 4-րդ սերունդ Գեղամին հաջորդել է նրա Չարմա որդին, որին էլ՝ անմիջապես Արամը՝ վերջինիս որդին: «Սեռաւ Գեղամ, և տիրեաց որդի նորա Չարմայ, ապա որդին Չարմայի Արամ»³¹: Մինչդեռ խորենացու մոտ այս Չարմա-Արամ հաջորդականությունը ընդմիջվում է Սիսակի մասին պատմությամբ³² ու էլի մի քանի դրվագներով և հետո միայն անդրադարձ կատարվում դեպի Գեղամն ու Չարման, որտեղ էլ պատմահայրը ընդհատված կապը վերականգնելու համար, կրկնելով իրեն, գրում է. «Այս Գեղամ որպէս ասասցուք յետ ամաց կենաց իւրոց ծնաւ զՉարմայ»... «Իսկ Չարմայ կեցեալ ամս ծնաւ զԱրամ»³³:

Այսպիսի հավելումը, որ ընդմիջարկության տպավորություն է թողնում, հիմնավոր կասկած է առաջացնում բուն ավանդության ու սույն հատվածի համաժամանակյա գրություն լինելու մասին և այլ հեղինակի է մատնացույց անում:

Անանունի տարբերակում չի հիշատակվում ոչ միայն Սիսակը, որը, լինելով Գեղամի որդին ու Չարմայի եղբայրը,

²⁸ Նույն տեղում, էջ 49:

²⁹ Սեբեոս, էջ 47–52:

³⁰ Նույն տեղում, էջ 47:

³¹ Նույն տեղում, էջ 50:

³² *Խորենացի*, էջ 41:

³³ Նույն տեղում, էջ 42 (ընդգծ. – Յ. Ս.):

պիտի որ զբաղեցներ իր տեղը նրանց կողքին, այլև նրա անմիջական ժառանգը՝ Առանը, որ ավանդության մեջ մեզ հետաքրքրող մասի կենտրոնական դեմքն է: Դարձյալ խորենացին է, որ հիշում է նրան և, ի դեպ, Սիսակին վերաբերող պատմությունից բավականին հեռու՝ իր աշխատության 8-րդ գլխում³⁴: Այսպիսով, նշված հատվածների բացակայությունն Անանունի մոտ, Սիսակի և Առանի մասին էլ խորենացու հաղորդումների բեկբեկուն բնույթն ու նրա անդրադարձումները նյութի շարունակելիությունն ապահովելու համար, հաստատում են վերը նշված այն ենթադրությունը, որ Սիսակ-Առանյան զրույցն իրոք որ ի սկզբանե չի կազմել ավանդության մաս, այլ նրանում տեղ է գտել ժամանակներ անց: Այս տեսակետի օգտին խոսում է մի հանգամանք ևս: Ավանդությունում Առանից սերված տեղի ժողովուրդները՝ ուտեացիները, զարդամացիները, ծավդեացիներն ու զարգարացիները, ի հակադրություն այն մյուս տոհմական տների, որոնք հիշատակվում են «նախարարութիւն» («նախարարութիւն ազգին Խոռխոռունեաց»³⁵), «նահապետութիւն» («զնահապետութիւնս Մանավազեան և Բզնունեաց և Որդունիս»³⁶), կամ պարզապես «տունն» («զտունն Վարաժնունիք»³⁷) որակումներով, ներկայացված են որպես իշխանություններ³⁸: Սա նշանակում է, որ քննարկվող զրույցի հորինման ժամանակ վերջիններս արդեն ունեին իրենց քաղաքական կազմավորումները և ավելի ուշ ժամանակներ է ենթադրում քան մ.թ.ա. 2-րդ դարը: Չակառակ պարագայում նրանք ևս, ինչպես Չայկի մյուս սերունդներից առաջացած տները, կմատնանշվեին վերոհիշյալ մակդիրներից մեկով:

Ուրեմն անվիճելի է. որ Սիսակ-Առանյան զրույցը բուն

³⁴ Նույն տեղում, էջ 42:

³⁵ Նույն տեղում, էջ 38:

³⁶ Նույն տեղում:

³⁷ Նույն տեղում, էջ 42:

³⁸ Նույն տեղում, էջ 113: Տե՛ս նաև վերը՝ ծնթ. 14:

ավանդության մեջ ներմուծված հետազայի ստեղծագործությունն է: Դա է պատճառը, որ այն չկա Մար Աբաս Կատինայի ավանդության Անանունի տարբերակում: Նրա բացակայությունը Անանունի մոտ, բայց առկայությունը Խորենացիական տարբերակում, լիակատար հիմք է տալիս արձանագրելու, որ Խնդրո առարկա գրույցը հորինվել և ավանդության մեջ ավելացվել է իր իսկ՝ Մովսես Խորենացու կողմից իր նշանավոր «Հայոց պատմությունը» գրելիս:

Ջրույցն, անշուշտ, վիպական գծերով հանդերձ, ունի իր պատմական ատաղձը: Խորենացին հենց այնպես, առանց որևէ հիմքի ոչինչ չի ստեղծում: Տվյալ դեպքում նրան հիմք են ծառայել իրապես գործածական դարձած «Սիսական» և «Առան» տեղանունները և գրույցում հիշատակվող ժողովուրդների փաստացի գոյությունը: Նման ակունք ունենալով էլ նա 5-րդ դարի վերջերին կամ 6-րդ դարի սկզբներին հյուսում է ներկայիս գրույցը և մուծում բուն ավանդության մեջ, որպես նրա տարրերից մեկը: Ավելի շուտ այն չէր կարող գրվել, քանի որ շոշափվող տեղանուններից «Առանը» Հայոց Արևելից կողմանց համար գործածական է դառնում միայն նշված ժամանակներից:

Այսպիսով, Մար Աբաս Կատինայի ավանդության Սիսակ-Առանյան ճյուղը ետնամույժ է: Այն հեղինակել է Մովսես Խորենացին՝ ելակետ ունենալով 5-րդ դարի վերջերից (կամ 6-րդ դարի սկզբներից) Հայոց Արևելից կողմերին տրվող «Առան» աշխարհագրական տեղանվան արդեն իսկ գոյությունը և հիշատակված ցեղերով այդ երկրամասի բնակեցվածությունը³⁹: Նրանում պատմահայրը փորձում է բացատրել նշված տեղանունների ծագումը և համաձայն անձնավորումների միջոցով տեղանունների ստուգաբանման իր սովորության, դրանք վերածում է անձնանունների և մարդեղացնելով

³⁹ Անտարակուսելի է, որ նշված ցեղերով երկրամասը բնակեցված էր անհամեմատ ավելի վաղ, քան հանդես կգար նրանց նախնի համարվող Առանը:

նրանց՝ այդ ոչ պատմական անձերի շուրջ հեղինակում իր պատումը:

Ավանդությունում Սիսակի տիրույթները հասցնելով մինչև հայերեն խոսակցության վերջին սահմանները և Առանին սերելով նրանից՝ պատմահայր Մովսես Խորենացին մատնանշում է Սիսական տոհմի գերիշխանությունը Մեծ Հայքի արևելյան շրջաններում և վեր հանում նրանց քաղաքական ուժն ու ազդեցությունը, որ ունեին նրանք Հայոց մեջ ընդհանրապես 5-6-րդ դարերում:

Սիսակ-Առանյան ավանդագրույցը իր մեջ կրում է նաև ազգային գաղափարաբանական տարրեր: Խորենացին, լինելով հայ ժողովրդի միասնության ջատագովը, չէր կարող նրան ազգային ոգի ու շունչ չհաղորդել: Նման նպատակամղումով էլ հայրենասեր պատմիչը գրույցում հիշատակվող ժողովուրդներին ու վերջիններիս նախահայրերին սերում է Հայկ նահապետից և դրանով ընդգծում ոչ միայն նրանց հայկական ծագումը, այլև ազգակցական կապվածությունը հայ ժողովրդի մյուս հատվածների հետ մշակույթով և քաղաքական ու տնտեսական ընդհանուր շահերով: